2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փ, 23

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 217-Ա

06-070-0036-0001, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Բադալյանի (ծնված՝11.11.1965թ.) դիմումը, Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի <<զ>> ենթակետով և 48-րդ կետով, <<Ինքես>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասերի հատակագիծը, Մարգահովիտ բնակաայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N-2 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

ՈՐՈՇՈՒՄ 'ԵՄ

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում 06-070-0036-0001 կադաստրային ծածկագրով 0,30767 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և իր վրա առկա շինությունների չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի:

2. Վերականգնել Արտակ Միշայի Բադալյանին (ծնված՝1965թ.), Էսմիրա Կարլենի Վարդումյանին (ծնված՝1965թ.), Հասմիկ Արտակի Բադալյանին (ծնվ 1989թ), Տաթևիկ Արտակի Բադալյանին (ծնվ 1991թ) պատկանող 06-070-0036-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և իր վրա առկա շինությունների նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը:

3. Փամբակ համայնքի Փամբակ գյուղի վարչական տարածքում 06-070-0036-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե Լոռու մարզ Փամբակ համայնք գ.Մարգահովիտ 24-րդ փողոց 2 բնակելի տուն:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 218-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 06.04.2022 թ-ի թիվ 29-Ա որոշումը և Լոռու մարզպետի 04.04.2022 թ-ի թիվ 01/107.4.1/02663-2022 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Կոստանդյան /համայնքի ղեկավար/
Անդամներ՝ Միքել Խեչումյան - Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Սամվել Խառատյան - Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Լիլիթ Քոչարյան - Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ

Սամվել Անանյան - ավագանու անդամ

Սերյոժա Սարգսյան - ավագանու անդամ

Շուշանիկ Հակոբյան - ավագանու անդամ

Սևակ Խաչատրյան - ավագանու անդամ

Նաիրա Հարությունյան - ավագանու անդամ

Համայնքի ղեկավար՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. ապրիլի 11
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 219-Ա

ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 06.04.2022թ-ի „Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին“, թիվ 43-Ա և „Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին“, թիվ 32-Ա որոշումներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով ստեղծել մշտական հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Սամվել Անանյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

Նախագահի տեղակալ՝ Սամսոն Ուլիխանյան /համայնքի ղեկավարի խորհրդական/

Քարտուղար՝ Լիլիթ Անդրիասյան /սոցիալական աշխատող/

Անդամներ՝ Հասմիկ Մացակյան /քարտուղարության, իրավաբ., աշխ. կառ. և զարգ. բաժնի պետ/

Լարիսա Հակոբջանյան /առաջին կարգի մասնագետ/

Լաուրա Սարգսյան /Փամբակի Հայփոստի աշխատակից/

Էմմա Գասպարյան /ավագանու անդամ/

Նաիրա Հարությունյան /ավագանու անդամ/

Ռոզա Փարեմուզյան /ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ/

Ալբերտ Ուլիխանյան /Փամբակի հիմնական դպրոցի տնօրեն/

Լուսինե Սարգսյան /Մարգահովիտ համայնքի բնակչուհի, քաղ. հասարակության ներկայացուցիչ/

2. Հաստատել Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. ապրիլի 11
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 220-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐԶՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ
Կառավարության „02,, հունիսի 2016 թվականի N 631-Ն որոշմամբ, հիմք
ընդունելով Փամբակ համայնքի ավագանու 06.04.2022թ-ի „ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության գործող
հանձնաժողովը ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին,, թիվ 35-Ա
որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել Փամբակ համայնքի խնամակալության և հոգաբարձության
հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Փամբակ համայնքի խնամակալության և հոգաբարձության
հանձնաժողովի տարեկան աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ղեկավար՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. ապրիլի 11
գ. Փամբակ



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (այսուհետ՝ Հանձնաժողով), ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 164-Ն որոշմամբ նախատեսված աշխատանքների համակարգման նպատակով: Հանձնաժողովի աշխատակարգի նպատակն է արդյունավետ դարձնել Հանձնաժողովի աշխատանքները և կանոնակարգել Հանձնաժողովի աշխատանքներին վերաբերող և Հանձնաժողովի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը:
2. Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:
3. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ Միջազգային պայմանագրերով, Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի անհատական կազմից համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:
Հանձնաժողովի նիստում որոշվում է հաջորդ հերթական նիստի օրը: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է գումարվել արտահերթ նիստ:
Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը արտահերթ նիստ գումարելու առաջարկությամբ կարող են դիմել Հանձնաժողովի նախագահին:
6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկության միջոցով: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած անդամների հատուկ կարծիքները կցվում են արձանագարությանը:
8. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

9. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով Հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել ՀՀ մարզպետարանների, համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, ՀՀ մարզպետարանների միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմինների, ինչպես նաև համայնքային սոցիալական ծառայության տարածքային բաժինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ներկայացուցիչները:
10. Հանձնաժողովի նիստերին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները:

III.ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

11. Հանձնաժողովի նիստերն իրականացվում են Հանձնաժողովի հաստատած օրակարգով: Հանձնաժողովի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը և ժամը:
12. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի հերթական նիստից առնվազն 15 օր առաջ կարող է հարց ներկայացնել Հանձնաժողովի նախագահին:
13. Հանձնաժողովի օրակարգում նշվում են.
- Հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը, ժամը,
 - Քննարկման ենթակա հարցերը,
 - Քննարկվող հարցը զեկուցողի անունը և ազգանունը:
14. Հանձնաժողովի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:
15. Հանձնաժողովի նիստերի իրականացման կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:

IV.ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

16. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:
17. Նիստի արձանագրության մեջ նշվում են.
- Նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամանակը,
 - Նիստի օրակարգը,
 - Նիստին մասնակցող, հրավիրված անձանց, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների անունները,
 - Քննարկվող հարցերի, զեկույցների հիմնական դրույթները,
 - Ընդունված որոշումները, դրանց տարածման/հրապարակման ձևերը:
18. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը եռօրյա ժամկետում ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

19. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

V. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հանձնաժողովի նախագահը.

- Նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
- Հաստատում է Հանձնաժողովի օրակարգն ու ստորագրում Հանձնաժողովի ընդունած արձանագրություններն ու որոշումները,
- Լսում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ և հանձնարարականներ,
- Որոշում է Հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը,
- Իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

21. Հանձնաժողովի անդամը.

- Մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,
- Ներկայացնում է հարցեր հանձնաժողովի նիստերում ընդգրկելու համար,
- Հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի մասին ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք,
- Մասնակցում է որոշումների ընդունման համար քվեարկությանը,
- Ծանոթանում է Հանձնաժողովի նիստերի արձանագրություններին,

22. Հանձնաժողովի քարտուղարը.

- Ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգների, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանց տրամադրումը Հանձնաժողովի անդամներին,
- Հանձնաժողովի անդամներին իրազեկում է Հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին,
- Ստորագրում է Հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները,
- Կազմում է Հանձնաժողովի արձանագրությունները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ և ՏԱՐԱԾՈՒՄԸ

23. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի արձանագրությունը նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Հանձնաժողովի բոլոր անդամներին:

24. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները հրապարակվում են համայնքի, ինչպես նաև հասմապատասխան մարզպետարանի կայքում:

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:
2. Հանձնաժողովի կազմում ընդգրկված են 7 անձ: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը հաստատված է համայնքի ավագանու կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի:
3. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ Միջազգային պայմանագրերով, Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, ինչպես նաև աշխատակարգով, որը հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:
4. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում մասնակցում է.
5. 14 տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալության սահմանմանը,
6. 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ հոգաբարձության սահմանմանը,
7. երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությանը՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում,
8. համայնքի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշմամբ սահմանված կարգով,
9. խնամատար ծնողների ընտրությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ,
10. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ, 16-րդ, 60-րդ կետերով և N 2 հավելվածի 65-րդ ու 66-րդ կետերով սահմանված գործառույթների իրականացմանը,
11. խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունների կատարմանը մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,
12. խնամակալների և հոգաբարձուների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով, հսկողության սահմանմանը,
13. խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով, վերահսկողության իրականացմանը
14. երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտությանը,

15. ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանը՝ ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում,

16. երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությանը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը (կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը կամ որդեգրումը կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը)։

17. հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրելու թույլտվության տրամադրմանը, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա,

18. ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփման ապահովմանը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա,

19. խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, գույքը գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն կամ խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների, ինչպես նաև վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործարքների թույլտվության տրամադրմանը։

20. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկությունների բացահայտմանը

21. ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերի բացահայտմանը և երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման ապահովմանը

22. համայնքներում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերի բացահայտմանը, պետական գրանցման գործընթացի կազմակերպմանը և մարզպետին իրազեկմանը,

23. հաշվի է առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներն ու կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան։

24. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանն իրազեկում է համայնքներում երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի մասին,

25. մասնակցում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերի ընտրմանը (խնամակալ, հոգաբարձու նշանակելը, խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը)՝ ելնելով երեխայի օրինական շահերի ապահովման սկզբունքից, ինչպես նաև ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից

26. մասնակցում է՝

ա. դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը,

բ. երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին,

գ. դատարանում ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննությանը,

դ. դատարանում ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերի քննությանը,

ե. դատարանում ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերի քննությանը,

զ. դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում,

է. երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը,

ը. քրեական վարույթում՝ որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ.

27. աջակցում է՝

ա. խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,

բ. երեխային խնամատար ընտանիքում ինտեգրվելուն, ինչպես նաև երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձնելու գործընթացին,

գ. խնամակալներին ու հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում,

դ. երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն՝ համագործակցելով ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ.

28. քննության է առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.

29. լուծում է ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.

30. քննարկում է ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ առկա հիմնախնդիրները.

31. նշանակում է քաղաքացու օգնական (պատրոն)՝ այն չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով և համաձայնությամբ, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները.

32. իրականացնում է աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով՝ համայնքում երեխաների ու ծնողների հետ, ինչպես նաև խնամք տրամադրող ու կրթական հաստատություններում իրազեկող հանդիպումների և միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով՝ այդ նպատակով համագործակցելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ներգրավելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ փորձագետների, ընդ որում, հանդիպումների քանակը, հաճախականությունը, ժամկետները որոշելիս և ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում համայնքի կարիքները, առանձնահատկություններն ու երեխաների իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը.

34. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարան է ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի հետազոտության ակտը և դրա հիման վրա՝ վեճի էության մասին եզրակացությունը.

35. մասնակցում են խնամակալին կամ հոգաբարձուին իր պարտականությունների կատարումից ազատմանը

ա. երեխային իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,

բ. խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանօրինակ այլ հաստատությունում տեղավորելիս, եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին,

գ. հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխըմբռնման բացակայություն և այլն) առկայության դեպքում՝ խնամակալի կամ հոգաբարձուի խնդրանքով,

դ. խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում՝ միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով նրան օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար.

36. երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում մասնակցում են երեխային ծնողներից կամ այն անձանցիցվերցնելու գործընթացին, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում է երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով.

37. մասնակցում է 14-18 տարեկան երեխայի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու կամ նրան այդ իրավունքից զրկելու միջնորդությամբ դատարան դիմելու գործընթացին,

38. անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունների կարգավորմանը

39. թերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին չխանգարելու այդ շփմանը.

40. օրենքով սահմանված կարգով խնամակալների ու հոգաբարձուների նշանակման և ազատման գործընթացին

41. երեխայի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (Էմանսիպացիա) որոշմանը նդունմանը,

42. անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում համաձայնության տրամադրմանը,

43. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքում առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու վերաբերյալ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) եզրակացության հիման վրա որոշման կայացմանը,

44. իրենց գործառույթներն իրականացնելիս հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ, իսկ այն հաշվի չառնելու դեպքում իրենց որոշման մեջ անդրադառնում են այդ փաստին՝ նշելով այն հանգամանքները (հիմնավորումները, մրցակցող շահերը և իրավունքները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ), որոնք հիմք են հանդիսացել միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը մասամբ կամ ամբողջությամբ հաշվի չառնելու համար, ինչպես նաև կարող են առաջարկել եզրակացության վերանայում կամ այլընտրանքային եզրակացություն՝ ներկայացված այլ մասնագետի կողմից.

45. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված այլ լիազորությունները:

46. Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակում են երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալություն սահմանելու, կամ որդեգրելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ ընտանեկան միջավայրում որևէ այլ միջոցով խնամք ապահովելու ուղղությամբ աշխատանքները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ աջակցող ցանցի այլ անդամների, ինչպես նաև երեխաներին խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների և այլ կազմակերպությունների հետ: